

Դավիթ Կարապետյան

Բանալի բառեր՝ Վախուչտի, պատմական աշխարհագրություն, հայաբնակ երկրանասեր, հայեր, Վրաստան, առևտուր

XVIII դարի առաջին քառորդի Վրաստանի պատմության հուշարձանների շարքում առանձնանում է Վախուչտի Արքայազնի, Վրացական թագավորության նկարագրությունը աշխատությունը [1]: Բացի այն, որ հեղինակը ներկայացնում է Վրաստանի առանձին վարչամիավորների պատմությունը, նա քաղաքական տեղեկություններից բացի ուշադրությունը կենտրոնացնում է նաև երկրանասերի մանրամասն նկարագրությունների վրա: Աշխատանքի այդ հատվածը առավել հայտնի է՝ Աշխարհագրություններ անունով[2]: Հեղինակի հիմնարար աշխատանքի հատկապես այս հատվածն է պարունակում հարուստ տեղեկություններ երկրի բնակչության կենցաղի, բնական ու տնտեսական պայմանների, էթնիկ կազմի մասին, հնարավորություն ընծեռելով պարզել Վրաստանում հայ բնակչության կենտրոնացման հիմնական տարածքները, ինչպես նաև նրանց մոտավոր թվաքանակը:

Հայ բնակչությունը Վրաստանում սկսեց առավել բազմամարդ դառնալ Դավիթ Շինարարի գահակալման ընթացքում (1089-1125 թթ.): Դա պայմանավորված էր հայկական պետականության բացակայությամբ և քաղաքական ու սոցիալ-տնտեսական այլ պատճառներով, ինչպես նաև Դավիթ Շինարարի վարած քաղաքականությամբ: Դեպի Վրաստան հայ բնակչության հոսքը առավել մեծ ծավալներ ընդունեց XV-XVIII դարերում: Դրան նպաստում էր վրացական թագավորական իշխանության վարած քաղաքականությունը, որի նպատակն էր ի հաջիվ հայ բնակչության ակտիվացնել Վրաստանի տնտեսական կյանքը[3]:

Թե՛ Կախեթում[4], թե՛ Քարթիում[5] Շահ Աբասի կազմակերպած 1615 և 1624 թթ. արշավանքների հետևանքով, քաղաքային կյանքը զգալի անկում ապրեց: Առավել ժամանակած հասցեց Կախեթի թագավորությանը, որում բացի բնակչության տեղահանությունից հաճախ պարսկական զինված ուժերը դիմում էին քաղաքների ամբողջական ավերման: Նախկին քաղաքների տեղում մնում էին միայն ոչ մեծ բնակավայրեր, որոնք ժամանակի հեղինակները հաճախ անվանում էին գյուղեր [6]: Կախեթի քաղաքների ավերակների մասին հիշատակում է ժան Շարոենը, ով նշում է.՝ Կախեթում չկան մեծ քաղաքներ, սակայն կան քաղաքների մեծ թվով ավերակներէ [7]:

Քարթիում ավերածությունները նման ծավալների չեն հասել, ուստի կար հնարավորություն վերականգնելու կրած նյութական ու մարդկային կորուստները, որոնք արտահայտվում էին քաղաքային բնակավայրերի մասնակի ավերմամբ: Սա էր հիմնական պատճառը, որ Վրաստանում հայ բնակչությունը հաստատվում էր քաղաքներում: Ընդ որում հայ բնակչության Վրաստանում հաստատման գիշավոր պատճառը վրացական քաղաքներում առևտուրի ակտիվացումն էր ու արքայական իշխանության համար կայուն հենարանի ստեղծումը:

Ուստինասիրվող ժամանակաշրջանում Վրաստանի քաղաքները ու քաղաքային կյանքը ունեին մի շարք առանձնահատկություններ, որոնք ուղղակի առնչվում էին հայ

¹⁹ Հոդվածն ընդունվել է 05.12.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական դեկանար, պ.գ.դ., ք.Կոստիկյանը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

բնակչությանը: Դրանցից գիխավորը այն էր, որ Վրացական թագավորություններում թագավորական իշխանության հենարանը քաղաքային բնակչությունն էր և հաճախ արքայի ու ֆեռապահական ավագանու պայքարը դրսորովում էր ավագանու կողմից քաղաքային բնակչության դեմ ուղղված գործողություններով: Վրացական ֆեռապահական վերնախավին հատկապես անհանգուածում էր արքայի կողմից քաղաքային առևտրականներին ու մոքալակներին[8] արտոնություններ տալը: Այդ պայքարը ստանում էր հայ-Վրացական միջէթնիկ հակասությունների բնույթ:

Ինչպես նշվեց, Կախուչտիի աշխատանքի աշխարհագրական հատվածը հարուստ տեղեկություններ է պարունակում քաղաքների ու գյուղերի մասին: Սակայն նրա ատլասների[9] տվյալների համադրում աշխատանքում հիշատակվող բնակավայրերի հետ ցույց է տալիս, որ հեղինակը խնդիր չի որել թվարկել բոլորը: Հիմնականում հիշատակվում են քաղաքական, տնտեսական, ռազմական տեսանկյունից կարևոր, կամ որևէ հիշարժան կառույց կամ շինություն ունեցող տարածքները: Հաշվի առնելով այս հանգամանքը փաստենք, որ Կախուչտիի աշխատանքում հիշատակված չեն բոլոր բնակավայրերը, քանի որ հեղինակը իր առաջ նման խնդիր չի որել և որպես հետևանք հեղինակը չի նշում հայկական բնակչություն ունեցող բոլոր տարածքները: Հետևաբար Կախուչտիի աշխատանքը միայն ընդհանուր գծերով է պատկերում հայության տեղաբաշխությունը Վրաստանում, սակայն հաշվի առնելով նմանաբնույթ այլ աշխատանքների բացակայությունը, „Աշխարհագրություններ Վրաստանի հայ բնակչության ուսումնասիրության համար համար ունի առաջնային սկզբնադրյուրի արժեքը:

Վրացական պետական կազմավորումների Քարթիի, Կախեթի, Իմերեթի թագավորությունների, Սամցխեի արաքեկության, կազմում բնակվող հայ բնակչությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի՝ թեայի Վրացական տարածքների գողթած հայ բնակչություն և Վրացական պետական կազմավորումների կազմում գտնվող հայկական շրջանների հայություն: Ընդ որում հայության այս երկու խմբերի միջև գոյություն ունեին տնտեսվարման ու կացութաձևի էական տարբերություններ:

Քարթիի վարչատարածքային կազմում գտնվող Հայաստանի պատմական տարածք հանդիսացող Երկրամասերում հայ բնակչությունը կազմում էր բացարձակ մեծամասնություն: Սա հաստատում են թե՝ Կախուչտին և թե՝ ժամանակաշրջանին վերաբերող այլ գրավոր սկզբնադրյուրներ[10]: Ըստ այդմ հայերը մեծամասնություն էին կազմում Աշոցքում, Տաշիրում, Լոռիում, Ղերեղի հովտում: Մեծամթիվ էր հայ բնակչությունը նաև Ախալցխեում և Ախալցխեի վիլայեթի կազմում գտնվող մի շարք այլ բնակավայրերում: Սակայն մահմետականացման միտումը Ախալցխեի վիլայեթում (նախկին Սամցխեի արաքեկություն) հնարավորություն չի տալիս հստակ տարանջատել հայ և վրացի բնակչությունը այս տարածքում: Միայն հավելենք, որ ըստ Կախուչտիի այստեղի բնակչությունը հիմնականում վրացախոս և վրացադավան էր[11]: Սակայն հիշատակություն, որ այս բնակչությունը հիմնականում վրացախոս և վրացադավան էր[12]: Կարծում ենք սա բավարար չէ պնդելու համար, որ տեղի բնակչությունը վրացական էր:

1735 թ. Նադիր խանը դեայի Խորասան քաղաքարքի Եմրարկեց Կարսի, Բայազետի, Կաղզվանի, Սամրվանի, Ջավախի, Ջըլդրի և Ղայղուիի 6000 հայերի: Այս իրադարձությունների վերաբերյալ Աբրահամ Կրետացին նշում է, Եվ գերեցին զՆարինանու նահանգն, զՋավախիթու, զՋտորու և զՂայի Ղուլու, որք էին բովնդակ ի մեր ազգե[13]: Աբրահամ Կրետացու հիշատակած տարածքների մի մասը գտնվում էր Ախալցխեի վիլայեթի կազմում, իսկ այդ փաստը հաստատում է, որ այնտեղ կար ստվար հայ բնակչություն: Այս վկայությունը փաստում է, որ Կախուչտիի՝ Ախալցխեի և հատ-

ՄԵՐՈՐԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Կապես նրանից հարավ ընկած տարածքների էթնիկ կազմին վերաբերող տեղեկությունները մակերեսային են և լիովին չեն արտացոլում պատմական իրականությունը: Պատճառը, թերևս, այն է, որ հեղինակը չի եղել նշված տարածքներում, և իր աշխատանքի այս հատվածի շարադրնան ժամանակ չի ունեցել բավարար վստահելի սկզբնադրյուրներ:

Արավել հանգամանալից և վստահելի են Վախուշտիի հաղորդումները Քարթլիի բնակչության վերաբերյալ, քանի որ Վախուշտին մինչև Վախթանգ արքայի հետ Ուստաստան տեղափոխվելը, ապրել ու պետական բարձր պաշտոններ է գրադեցրել Քարթլիի թագավորության արքունիքում: Քարթլիի վարչատարածքային կազմում գտնվող երկրամասերի վերաբերյալ Վախուշտիի հայտնած տեղեկությունները արժանահավատ են հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նրա հաղորդած տեղեկությունները սեփական դիտումների արդյունք են:

Քարթլիի տարածքում հայերի բնակչության գլխավոր կենտրոնը Թիֆլիսն էր, որտեղ ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայ բնակչությունը կազմում էր բնակչության բացարձակ մեծամասնությունը: Դա փաստում է Վախուշտին [14], ժամանակի հայ հեղինակները [15], ինչպես նաև քաղաք այցելած եվրոպացի ճանապարհորդները [16]: Խոշոր քաղաքային բնակավայրում կենտրոնացած հայ բնակչության հիմնական գրադարձները առևտուղն էր ուստի Վրաստանում հայ բնակչության աճի հետևանքով ժամանակի ընթացքում տեղի հայ բնակչության ծերքին կենտրոնացավ վրացական առևտուրական կապիտալի զգալի մասը:

Բացի Թիֆլիսից մեծաքանակ հայ բնակչություն կար նաև Գորիում: Այստեղ հայերը մեծ թիվ էին կազմում դեռևս Դավիթ Շինարարի օրոք, իսկ ինդրո առարկա ժամանակաշրջանում քաղաքի բնակչության զգալի մասն էին [17]:

Բացի խոշոր քաղաքներից վրացական պետական կազմավորումների տարածքում կային ոչ մեծ բնակավայրեր, որոնց բնակչությունը բաղկացած էր բացառապես հայերից: Արդ նշենք այն քաղաքների ու բնակավայրերի անունները, որոնցում ըստ Վախուշտիի այս կամ այն չափով կար հայ բնակչություն՝ Աստենի[18], Իմերիսկի[19], Ախալգորի[20], Ցիխինվալ[21], Ալի [22], Սուրամ [23], Ածխուլ [24], Ախալցխե[25], Գոկիալ[26], Քարալեթ[27], Չխարի, Չիխոր, Սաշխեթի[28], Թութայիս[29], Թամարաշեն[30], Բուստան-Քալակի[31]: Նշված բնակավայրերի տեղադրության որոշումը թույլ է տալիս եզրակացնել, որ հայության կենտրոնացման հիմնական տարածքը համընկնում էր ներկայիս Գորիի ու նրա շրջակա տարածքին: Նշված բնակավայրերը հիմնականում գտնվում են Գորիից արևմուտք ու հյուսիս՝ մինչև ներկայիս Ցիխինվալ ընկած տարածքում՝ ինչպես նաև Ցիխինվալի շրջակայրում: Հյուսիսում հայկական բնակչություն ունեցող տարածքները հասնում ու ներառում էին Ցիխինվալ քաղաքը[32]: Հարավում հայ բնակչության տարածման սահմանը դժվար է ճշգրտելը, քանի որ նշված տարածքների հարավային սահմանները հայկական երկրամասերն են, բնակեցված հայ ազգաբնակչությամբ: Նշենք, որ այս քաղաքները հիմնականում առևտուրական կարևոր նշանակություն ունեցող բնակավայրեր էին: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ Վրաստանում հայ բնակչության հաստատման հիմնական պատճառը այնտեղ առևտուրի զարգացումն էր:

ԽՎ-ԽՎԻ-րդ դարերի վրացական քաղաքների բազմաթիվ նկարագրություններ թողել են նաև օտարերկյա ճանապարհորդները: Այդ հեղինակների աշխատությունները Վրաստանի հայ բնակչության վերաբերյալ կարևոր սկզբնադրյուր են և հաստատում ու լրացնում են Վախուշտիի հաղորդած տեղեկությունները: Այդ վկայությունները ևս մեկ անգամ փաստում են, որ Վրաստանի առևտուրը, ներքին և հատկապես արտաքին,

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Կենտրոնացած էր հայ բնակչության ծերքին: Արդ մեջբերենք այդ վկայություններից մի քանիսը, որոնք հաստատում են այդ հանգամանքը:

Պատրիարք Սակարիան գրում է, Երկրի ամբողջ առևտուրը գտնվում է վրացիներին ենթակա հայերի, իրեաների և որոշ հոյների ծերքին: Չնայած, որ Վրացիները նրանց ապրանքները գնում են Երկու-Երեք անգամ ավելի քանի, սակայն հարգում են նրանց, Այս հայերը և իրեաները կազմում են Վրաստանի հարուստների դասը, և րոլոր վրացիները ներառյալ նրանց ղեկավարները հայերի պարտապաններն են: Այս առևտրականներից յուրաքանչյուրը տանը ունի մի քանի վրացի ստրուկ, ու վարվում է նրանց հետ այնպես ինչպես կամենում է [33]:

Ծարդենք նշում է, Վրաստանում հայերը քանակապես գերազանցում են վրացիներին, ու անհամեմատ ավելի հարուստ են: Նրանց կացութաձևի, հայացքների ու հավատքի տարրերությունների պատճառով նրանք ասում են միջյանց և երբեք չեն ծովլվին [34]:

Ինչ վերաբերում է Վրաստանի կազմում գտնվող հայկական տարածքներին, որոնց բնակչության կազմը այդ տարածքների պատկանելիության հետ կապված բազմաթիվ հայ-վրացական խնդիրների ու հակասությունների պատճառ է դարձել, ներկայացվում է Կախուչտի մոտ: Բացի այմ, որ հեղինակը նշում է Աշոցքում, Տաշիրում և մի շարք այլ տարածքներում հայ բնակչության բացարձակ մեծամասնություն լինելու հանգամանքը առանձին բնակավայրերի օրինակով, նաև նաև հստակ ընդգծում է հայ բնակչության գրադեցրած տարածքների սահմանները: Ըստ այդմ հայ բնակչության առավել խիստ շրջանը սկսվում է Ղերեն գետից ու ընդգրկում էր ամբողջ Սոմխիթը [35], որի բնակչության մեծամասնությունը բայտ Վախուչտի հավատով [36]ե, այս դեպքում անշուշտ նաև ազգությամբ, հայեր են, իսկ փոքր մասով՝ հավատովել վրացիներ են [37], որոնց թվում կարող էին լինել ինչպես քաղկեդոնական հայեր, այնպես էլ վրացիներ [38]: Այս տեղեկություններից հստակ երևում է, որ չնայած բազմաթիվ պատերազմներին, պարսկական իշխանությունների կողմից տարածքը թյուրքական ցեղերով բնակեցնելուն, Հյուսիս արևելյան Հայաստանի բնակչության կատարյալ մեծամասնությունը շարունակում էր մնալ հայկական:

Փաստենք, որ վրացական պատմագիտության որոշ ներկայացուցիչներ, ոչ տեղին ընդիամուացումներ կատարելու հետևանքով հաճախ բերում են տեղեկություններ, որոնք իրականության հետ ոչ մի աղերս չունեն: Այսպես մի շարք վրացի հեղինակներ [39], ներկայացնելով Վրաստանի կենտրոնական շրջանների ավերումը ու բնակչության կորուստները, ինչպես նաև ժամանակի վրացական թագավորական իշխանության կողմից (հատկապես շատ է նշվում Ռուսում (1632-1658թթ.) արքայի անունը) այդ՝ կորուստեր կրած շրջանները հայ բնակչությամբ համալրելու փաստը [40], միևնույն խմբում շարունակաբար նշում են նաև հայկական Լոռին, Տաշիրը, Աշոցքը և այլն [41], չմատնամշելով այն հանգամանքը, որ հայ բնակչությունը մեծամասամբ բնակեցվում էր Վրաստանի կենտրոնական խոշոր քաղաքներում, ու այդ վերաբնակեցումների զիյավոր նպատակը քաղաքային կյանքի ու առևտուի աշխուժացումն էր, ինչպես նաև արքայական իշխանության համար վստահելի հենարանի ստեղծումը: Այս համատեքսուում որևէ տրամաբանության չի ենթարկվում այն հանգամանքը, թե իբր Լոռին կամ Քարթիի Վարչական կազմում գտնվող այլ հայկական տարածքներ հայերով բնակեցրել են վրացական իշխանությունները, քանի որ ավատափառական պետության ժայրամատում այլ էրմիկ տարրի կենտրոնացումը մահացու վտանգ կլիմեր ցանկացած կենտրոնացված կառավարմանը աչքի չընկնող պետական կազմավորման համար, այդ թվում նաև Վրաստանի թագավորությունների:

13. Վախուշտին թվային տվյալներ չի ներկայացնում, սակայն նշում է, որ հայ բնակչությունը քաղաքում ամենամեծաթիվն էր, տե՛ս յարտօնության ցեղազրյան, Յոմի 4, զ. 339.
14. Տե՛ս Եսայի կաթ. Հասան Զալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից Երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 47-48:
15. Տե՛ս Մարգեհ Հ. , նշվ. աշխ., էջ 204: Ըստ 1701 թ. Թիֆլիս այցելած Թուրքենեֆորի՝ քաղաքում բնակվել է շուրջ 20 հազար մարդ, որոնցից՝ հայերը եղել են 14 հազար, մուսուլմանները՝ 3 հազար, վրացիները՝ 2 հազար և հռոմեկան կաթոլիկները՝ 5 հայուր, որոնք ևս հայեր են եղել, սակայն լուրջ տարածայնություններ են ունեցել այլ հայերի հետ: *Տե՛ս Relation d'un voyage du Levant. Par M. Pitton de Tournefort, tome troisième, Lyon, MDCCXVII, p. 167:*
16. Տե՛ս յարտօնության ցեղազրյան, զ. 366-367:
17. Վախուշտին հիշատակում է, որպես փոքր ամրոցատիպ քաղաք, տե՛ս յարտօնության ցեղազրյան, Յոմի 4, զ. 135, հիշատակում են նաև Բերի Էգնատեշվիլին, տե՛ս աճալու յարտօնության ցեղազրյան, յարտօնության ցեղազրյան, Յոմի 2, տօնօլուսո, 1959, զ. 135, 146, Ներկայումս նախկին քաղաքի տարածքում կա ոչ մեծ բնակավայր, ինչպես նաև պահպանվել է Սիոն հայտնի տաճարը, գտնվում է Գորի քաղաքից 10 կմ հեռավորության վրա, տե՛ս յարտօնության ցեղազրյան ցեղազրյան, տօնօլուսո, 2013, զ. 62-63.
18. Այս անվանմամբ երկու բնակավայր կա Վրաստանի տարածքում, առաջինը գտնվում է պատմական Իմերեթի տարածքում, երկրորդը, որի մասին նշում է հեղինակը, ներկայիս Վրաստանի Կենտրոնական մասում է՝ Կարելի շրջանում, Գորի քաղաքից արևմուտք:
19. Գյուղ Ներկայիս Վրաստանում, Քսանի գետի հովտում, Խորհրդային շրջանում հայտնի էր Լենինգրդի անունով, գտնվում է Գորի քաղաքից հյուսիս-արևմուտք, որը XVII-XVIII դդ. հայտնի առևտրական կենտրոն էր : Տե՛ս յարտօնության ցեղազրյան ցեղազրյան լուրջ ու առևտրական կենտրոն էր լուրջ ու առևտրական կենտրոն (յարտօնության ցեղազրյան, զ. 71: Այն հիշատակում են Վախուշտին (յարտօնության ցեղազրյան, զ. 359, 412, 623), Բերի Էգնատեշվիլին (յարտօնության ցեղազրյան, զ. 372, 24)):
20. Ըստ Վախուշտիի՝ ոչ մեծ քաղաք Դիդի Լիախվի գետի ափին, որտեղ բնակվում են վրացիներ, հայերե, տե՛ս յարտօնության ցեղազրյան, Յոմի 4, զ. 370. Ներկայումս հարավային Օսերիայի մայրաքաղաքն է, XVIII դարում հայտնի էր, որպես առևտրի ու արհեստների քաղաք, տե՛ս նաև յարտօնության ցեղազրյան ցեղազրյան լուրջ ու առևտրական կենտրոն, նշվ. աշխ., էջ 594-596:
21. Ներկայումս գյուղ Խաչուրիի շրջանում, միջնադարյան Ալի քաղաքը գտնվում էր հմերեթից Քարթի տանող Ճանապարհին, հայտնի առևտրական քաղաք էր, հիշատակում է Վախուշտին (տե՛ս յարտօնության ցեղազրյան, Յոմի 4, զ. 442, 493): Հնմտ. յարտօնության ցեղազրյան ցեղազրյան լուրջ ու առևտրական կենտրոն, նշվ. աշխ., էջ 27.
22. Գտվում է ներկայիս Խաչուրիի շրջանի հյուսիսի արևմուտքում, բացի Վախուշտիից (Տե՛ս յարտօնության ցեղազրյան, Յոմի 4, զ. 377-379, 476-478) հիշատակում է Բերի Էգնատեշվիլին տե՛ս աճալու յարտօնության ցեղազրյան, յարտօնության ցեղազրյան, նշվ. աշխ., էջ 240, 387, 417, 493, 521, տե՛ս նաև յարտօնության ցեղազրյան ցեղազրյան լուրջ ու առևտրական կենտրոն, նշվ. աշխ., էջ 492-493.
23. Ամրոց և բնակավայր Ախալցիւնից Գորի տանող Ճանապարհին, Կուր գետի ափին (տե՛ս նաև յարտօնության ցեղազրյան ցեղազրյան լուրջ ու առևտրական կենտրոն, զ. 83-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀԾՏՎԻ ՀԱՍԱԼԱՄԱՆԻ ՂՐԱՄԱՆ 2018

- 69-71): Վախուշտին հիշատակում է որպես առևտրականների քաղաք և ամրոց (տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 662):
24. Քաղաք Վրաստանի հարավում, Սամցին-Զավախսեթի Կենտրոն, 1578 թ. գրավել են Թուրքերը, 1628 թվականից՝ համանուն վիլայեթի Կենտրոն (տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, ց3. 663-665): Հմնտ. յարտօլուս ցեղազրյալու ժամանակակից լուսականությունը, ց3. 77:
25. Գյուղ Վրաստանի հանրապետության Ախալքալակի շրջանում (տե՛ս յարտօլուս ցեղազրյալու ժամանակակից լուսականությունը, ց3. 151): Ըստ Վախուշտիի՝ այստեղ բնակվել են մեսխեր, հայեր (տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, ց3. 669):
26. Ներկայումս գյուղ Վրաստանում, Ախալքալակի տասը կիլոմետր հյուսիս, XVIII դարի առաջին կեսին իրանը, Թուրքիան ու Հարավային Կովկասի երկրները միացնող ճանապարհների վրա գտնվող առևտրական կենտրոն (տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 670): Հմնտ յարտօլուս ցեղազրյալու ժամանակակից լուսականությունը, ց3. 93):
27. Այս բնակավայրերը գտնվում են պատմական Իմերեթի տարածքում, ներկայիս Վրաստանի Հանրապետության Թերժող շրջանում: Տե՛ս յարտօլուս ցեղազրյալու ժամանակակից լուսականությունը, նշվ. աշխ., էջ 580 Սախչերին ուսումնասիր-վող ժամանակաշրջանում առանց պաշտպանական ամրությունների քաղաք էր, որի բնակչության հիմնական մասը առևտրականներ էին, տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 755:
28. Ներկայումս համանուն քաղաք, Վրաստանի Իմերեթի մարզում, ըստ Վախուշտիի՝ ամրոցատիպ քաղաքէ, տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 796, Խնդրո առարկա (ո՞ր) ժամանակաշրջանում Իմերեթի թագավորության մայրաքաղաքն էր, առևտրական կարևոր կենտրոն տե՛ս յարտօլուս ցեղազրյալու ժամանակակից լուսականությունը, նշվ. աշխ., էջ 545-551:
29. Գտնվում է ներկայիս Ցիխինվալի շրջանում, մոտավորապես ժամանակակից համանուն գյուղի մոտ, XVIII դ.-ումիշիշատակվում է որպես ոչ մեծ քաղաք, ըստ Վախուշտիի բնակչությունը բացառապես հայկական էր, տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 370., 493, Հմնտ. յարտօլուս ցեղազրյալու ժամանակակից լուսականությունը, նշվ. աշխ., էջ 229.
30. Տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 113, 115, 151, 157, 331, 538, ներկայումս Ռուսավի, գտնվում է Թբիլիսիից հարավ-արևելք, մանրամասն տե՛ս յարտօլուս ցեղազրյալու ժամանակակից լուսականությունը, նշվ. աշխ., էջ 422-425:
31. Տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 370
32. Ջյու Պ., Հրազդակ 17-օմ տարությունու պատրիարքա Մակարիա, Կազան, 1905, ս. 51: Հմնտ. Մեսչիա III. A., նշվ. աշխ., էջ 187
33. Տե՛ս յարտօլուս ցեղազրյալ, Ծոմո 4, ց3. 370
34. Վրացական պատմագիտական գրականության մեջ շրջանառվող տեսակետի համաձայն Սոմիսիթը կապ չունի Սոմիսեթ-Հայաստանի հետ և առանձին տեղանուն է, սակայն ի հակադրություն այս տեսակետի վրացական միջնադարյան գրեթե բոլոր աղբյուրները Սոմիսիթ նշելով նկատի են ունեցել հենց Հայաստանը: Մանրամասն տե՛ս Թորոսյան Խ., Թագավորությունն ու գովաբանությունը որպես Զաքարյան Հայաստանի ու Զաքարյանների պատմությունն սկզբնադրյուր , Երևան, 1992, էջ 116-166, Հմնտ Տօրօսիա Խօսք, Տոպոնիմ “Սոմխիտ” մասնակից պատմությունների մասին, Երևան, 2003: Վախուշտին և գրեթե չի օգ-

ՄԵՄԻՐՈՒ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՏՏՈՒ 2018

տագործում Սոմխեթ-Հայաստան եզրույթը, փոխարենը կիրառելով Սոմխիք-քարթի տեղանունը, որը Վախուշտիի աշխատանքում ցոյց է տալիս հայերով բնակեցված ու հայերին պատկանող այն տարածքը, որը գտնվել է Քարթիի Վարչական կազմում: Վախուշտին նաև ներկայացնում է Սոմխիթի սահմանները՝ արևմուտքում Աշոցք, արևելքում՝ Դեբեդ, հյուսիսում՝ Բոլնիս, հարավում՝ Լալվար և Լոկի լեռ:

35. «Հավատով կամ դավանանքով հայեր» ասելով հեղինակը նկատի ունի միաբնակներին (Հայ առաքելական եկեղեցու հետևորդներին):
36. «Հավատով կամ դավանանքով վրացիներ» ասելով հեղինակը նկատի ունի քաղկեդոնականներին (Վրաց ուղղափառ եկեղեցու հետևորդներին):
37. Տե՛ս յաշուղութեան ցեղազրյաց, Ցուցութեան 4, Ց. 309-312.
38. Շոտա Տետված, Օտար Տետված, Արման Տետված (ս դրեան առաջնական մասունքների մասին), Ենոքան, 2008.
39. Տե՛ս նույն տեղում, էջ 24-26:
40. Տե՛ս նույն տեղում:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Հայերի Տեղաբաշխումը Վրաստանում ըստ Վախուշտի Արքայազնի
Դավիթ Կարապետյան**

18-րդ դարի առաջին տասնամյակներին Վրաստանի մի շարք շրջաններում՝ Թիֆլիսում ու շրջակայքում, Գորիում ու դրան մոտ գտնվող ոչ մեծ բնակավայրերում, Մուխրանին հարակից ոչ մեծ բնակավայրերում, Ցիխինվալ քաղաքում և հարակից շրջանների ոչ մեծ բնակավայրերում, Քութայիսում, հայ բնակչությունը բավականին մեծ թիվ էր կազմում: Փաստորեն, հայության կենտրոնացված բնակության տարածքը սկսվում էր Քութայիսից արևմուտքում և հասնում Ուսւքավի արևելքում, ինչպես նաև տարածվում հյուսիս՝ մինչև ներկայիս Ցիխինվալ քաղաքը ներառյալ, իսկ Քարթիի վարչատարածքային կազմում գտնվող հայկական երկրամասներում բացարձակ մեծամասնություն էր:

РЕЗЮМЕ

**Распределение армянского населения в Грузии в первые десятилетия XVIII века по
сведениям принца Вахушти
Давид Карапетян**

Ключевые слова: Вахушти, историческая география, территории, населенные армянами, Грузия, торговля.

Резюмируя отметим, что в первые десятилетия в Тифлисе и его окрестностях, в Гори и близлежащих поселениях, в небольших поселениях недалеко от Мухрана, в Цхинвали и небольших поселениях, в окрестностях Кутаиси, армянское население было довольно многочисленным. Фактически, по словам Вахушти, концентрированное местоположение армянского населения начиналось от Кутаиси с запада и достигало до Рустави в восточной части и распространялось на север, включая нынешний город Цхинвали. По сведениям, Вахушти армянское население составляло абсолютное большинство в армянских территориях, которые находились в составе Картли.

SUMMARY

**Distribution of the Armenian population in Georgia in the first decades of the XVIII century
according to Prince Wakhust
David Karapetyan**

Keywords: *Wakhusht, historical geography, territories inhabited by Armenians, Georgia, trade.*

According to the information provided by the Georgian historian and geographer Wakhusht Bagrationi, in Tiflis and its environments in Gori and nearby settlements, in small settlements near Mukhran, in Tskhinvali and small settlements in the vicinity of Kutaisi, the Armenian population was numerous. In fact the concentrated location of the Armenian population began from Kutaisi in the west and reached Rustavi in the eastern part, spread northwards including the present city of Tskhinvali. According to Wakhusht, the Armenian population was the absolute majority in the Armenian provinces that were part of Kartli.